**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

«14.» 10 2021թ.

# ՀՐԱՄԱՆ N 528-Ն

«ԲԻՍ ԷՅՐԼԱՅՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Բիս էյրլայն» ՍՊ ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 11-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Բիս էյրլայն» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Կիև/UKKK/-Երևան/UDYZ/-Կիև/UKKK/ երթուղով՝ 2021 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2022 թվականի մարտի 24-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ և Օդեսա/UKOO/-Երևան/UDYZ/-Օդեսա/UKOO/ երթուղով՝ 2021 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2022 թվականի մարտի 22-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք,

տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ:

2. Սահմանել, որ Ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածում՝ 2021 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2022 թվականի մարտի 24-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Կիև/UKKK/ և 2021 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2022 թվականի մարտի 22-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Օդեսա/UKOO/ ուղղություններով Հայաստանի Հանրապետություն տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթերի հաճախականությունների պահանջներին, և հետևաբար սույն կետում նշված Երևան/UDYZ/-Կիև/UKKK/ և Երևան/UDYZ/-Օդեսա/UKOO/ մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «գ» ենթակետով սահմանված արտոնությունը: Նշված ուղղություններով Ընկերության IATA ամառային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության ներկայացվող հայտերի հիման վրա:

3. Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվությունների տեղադրումը Կոմիտեի կայքում:

4. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պաշտոնակատարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվությունների հանձնումն Ընկերությանը:

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Revoked certificate

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 146/2021
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 146/2021
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

| | |
|---|---|
| Օդանավ շահագործողը<br>Aircraft Operator | «Բիս էյրլայն» ՍՊԸ<br>“Bees Airline” LLC |
| Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)<br>Type(s) of aircraft(s) | Boeing 737-800 |
| Հաճախականությունը<br>Frequency | շաբաթական 2 չվերթ<br>2 flights per week |
| Երթուղին<br>Air route | Կիև/UKKK/-Երևան/UDYZ/-Կիև/UKKK/<br>Kyiv/UKKK/-Yerevan/UDYZ/-Kyiv/UKKK/ |
| Թույլտվության գործողության ժամկետը<br>Permission validity | 31/10/2021 մինչև 24/03/2022<br>31/10/2021 till 24/03/2022 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ
10/14/2021

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ
CHAIR OF THE
CIVIL AVIATION COMMITTEE
TATEVIK REVAZYAN

14.10.2021
(տալու ամսաթիվը)
(date of issue)

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 147/2021
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ
ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 147/2021
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF
ARMENIA

| | |
|---|---|
| Օդանավ շահագործողը<br>Aircraft Operator | «Բիս էյրլայն» ՍՊԸ<br>"Bees Airline" LLC |
| Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)<br>Type(s) of aircraft(s) | Boeing 737-800 |
| Հաճախականությունը<br>Frequency | շաբաթական 1 չվերթ<br>1 flight per week |
| Երթուղին<br>Air route | Օդեսա/UKOO/-Երևան/UDYZ/-Օդեսա/UKOO/<br>Odessa/UKOO/-Yerevan/UDYZ/-Odessa/UKOO/ |
| Թույլտվության գործողության ժամկետը<br>Permission validity | 02/11/2021 մինչև 22/03/2022<br>02/11/2021 till 22/03/2022 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ
CHAIR OF THE
CIVIL AVIATION COMMITTEE
TATEVIK REVAZYAN

10/14/2021

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

14.10.2021
(տալու ամսաթիվը)
(date of issue)